ՆՈՐ-ԴԱՐ

№ 200 ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ, 7 Նոյեմբերի, 1903 Ուրբաթ, 7 Նոյեմբերի, ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 200

Տարեկան 10 րուբ. վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կ. ամիսը՝ (Թիֆլիսում) 1ր., հատով 5 կ.։ Բաժանորդ են դրւում միմիայն խմբագրատանը՝ Դաւիդով. փողոց № 5.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ Даръ» կամ Tiflis Redaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնների ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ. բեկամների համար կրկնապատիկ։

Կիրակի, 9-ն Նոյեմբերի, 11 ժամին առաւօտեան, Թադման բառամներորդ օրը բազմաշխատ և յարգելի

Դաւիթ աւագ քահանայ Եսայեանցի

պատերն և փեսաները խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհք բերել Քութայիսի Հայոց եկեղեցին և յարգել հանգուցեալի յիշատակը, ուր և կը կատարուի սուրբ պատարագ ու հոգեհանդիստ։

(318) 1—1

ՅՕԳԱՄՕՔՍՆԵՐՆ ՈՒ ԴՐՊԱՆՆԵՐԸ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԱԾ

Ընթերցողների ուշադրութիւնն ենք դարձնում թերթիս այսօրուայ համարի Մամուլի շուրջը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՄԵԾԱՀԱՄԶԱՆ ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մարդ երկրիս վրայ երևալուց յետոյ սկսեց որոշել իր դերը բնութեան մէջ։ Նա իւր բանականութեան շնորհիւ բաժանուեց կենդանիներից և բոլորովին առանձին տիրանալով երկրին։

Բանականութիւնը սիդում էր, ուսումնասիրում էր բնութեան բազմաթեակ գաղտնիքները և ուզում էր յուծել, պարզաբանել նրանց պատճառները. սակայն երբ ուզեցրի հրաժարւում էր բացատրութիւն տալուց, այն ժամանակ նրան օգնութեան էր հասնում երևակայութիւնը։

Վերջինս է, որ ստեղծել է զանազան տեսակ լեգենդներ և աւանդութիւններ։ Մարդկութիւնը իւր կեանքի ընթացքում հանդիպում էր շար և բարի երևոյթների, որոնց պատճառը, էութիւնը ուզում էր պարզաբանել. ինչպէս մէկն էր նա իւր խակ մտքով —և նա ստեղծում էր շար ու բարի աստուածներ և նրանց է վերագրում այլ երևոյթների պատճառը։

Շատ անգամ էլ մարդկութիւնն իրեն ճնշուած, յոգնած զգալով, ուզում էր աւելի բարձր լինել երկնից, աւելի վերը թռչել և որպէս զի գոնէ բոպէապէս մոռանայ իրեն չրջապատող դառն իրականութիւնը, նա ստեղծում է իդէալական տիպեր, որոնց երբէք չէ հասնելու։ Զգալով իւր վատ մէտնոլորտի մէջ ընկնելը, տեսնելով իւր անուղիղ և չարութիւից ապականուած ճանապարհը, նա ստեղծում է մաքուր, անարատ և զուտ գաղափարական տիպարներ որպէս զի գէթ մտքով գմայլեցնի իւր մաշուած հոգին, գարձնելով գէպի նրանց իւր յոգնած աչքերը, որպէս մի յուսապայծառ փարոսի, որի տակ փրկութիւն է գտնում մարդ իսաւարի ու բաղդի խաղալիքների ճիրաններից ազատուելուց յետոյ։

Աւանդութիւնների մէջ արտափայլում են անցեալ մարդկութեան հոգեյ լաւ և վիրաւոր կողմերը, նրա համոզմունքներն ու հասկացողութիւնները։ Վեր առնենք օրինակ «Թափառական հրէան»։ դա մարդկութեան մշտական սերմանքն է, որ միշտ ձգտում է նրան բուն ճանապարհից, որովհետև նա այնքան է բթացրել գիտութեան, ազորմածութեան և բարերարութեան զգացմունքը, որ խաչ է հանել տալիս իւր իսկ Աստծուն։ «Պսիխէա»-ի մէջ երևում է կանանց հոգեյ բազմատեսակ դաղտնիքների արտայայտութիւնը և այլն։

Պէտք է մտածելին աւանդութիւնները թէ ոչ։ Ի հարկէ ոչ։ Ու գիտութիւնը ամենայն խնամքով և պատկառանքով հաւաքում է մարդկութեան մտքի և հոգեյ առաջին ստեղծագործութիւնները, որպէս դի գրանցով պարզաբանէ, վերակազմէ նրա հետաւոր անցեալը։

Հայ ընթերցողները շատ անգամ հանդիպում են Ֆաուստ, Մեֆիստոֆել կամ Վեներա, Էրոտ և այլ անուններին, սակայն շատերը չգիտեն, թէ այդ անունների հետ ինչ լեգենդներ են կապուած։

Այդ պատճառով մենք առաջարկում ենք այդպիսի ընթերցողներին ծանօթանալ մարդկութեան մեծահետաքրքիր լեգենդների հետ, որոնցից մէկին առաջինը բերում ենք սորև թարգմ. «Вѣстникъ Знанія»-ից

ՊՍԻԽԷԱ

Երբեմն ապրում էր մի թագաւոր. նա ունէր մի աղջիկ. այդ աղջկան այնպիսի կեղեցկութիւն տուէր, որ նրան տեսնողը ակամայ կանգ էր առնում և զմայլւում նրա վրայ։ Նրան համեմատում էին Վեներայի հետ և մինչև անգամ նրանից էլ գերադասում։

Սակայն որովհետև չէին կարծում, որ այդպիսի չլացուցիչ կեղեցկութիւնը կարելի է տալ մարդկային արարածին, ուստի յանուն այդ կեղեցկուհու կառուցում էին տաճարներ և նրան երկրպագում, որպէս աստուածուհու։

Ու նրա մեծ քոյրերը, որոնք չատ անճոռնի երևս ունէին՝ այժմ, խորհրդում էին նախանձից։ Սակայն աւելի ստոր զայրացած էր գեղեցկութեան թագուհի Վեներան, որ չէր կարողանում այլևս համբերել, տեսնելով իւր սխալանքին եղող պատուոյ ցոյցերը, ուստի մատնեց նրանից վրէժ առնել, չքացնել նրան։

Նա կանչեց իւր որդի Էրոտին և ասաց՝ «Որդեակս դու կզոյաս կատարութիւնից, եթէ իմանաս այն անպատուութիւնը, որ ինձ հասցրել են մարդիկ։ Մահկանացուներն իրենց երկրում գտել են մի ինչ որ կնիկ, որը ինչպէս պատմում են, կարող է գեղեցկութեամբ ինձ հետ մրցել. այդ պատճառով նրանք թողնում են իմ տաճարները երկար վրայ և նրա համար են միայն կատարում նոր և նոր տաճարներ։ Ես կարող էի Զևսին խնդրել, որ նա մի կայծակի չանթով ջնջէր մարդկութիւնը, բայց ինչ, նրանք չիմար են, և չգիտեն, թէ ինչ են անում. աւելի լաւ է, որ միայն հպարտ կեղեցկուհին, պատժուի, քանի որ նա չանդգնում է այդպիսի պատիւներ ընդունել մահկանացուներից։ Ես յոյս դրել եմ քեզ վրայ, գնա և վրէժխնդիր եղիր իմ տեղ»։

Էրոտը գրկեց Վեներայի ձիւնափայլ ծնկները և ասաց՝ դու ամենայն վատահութեամբ կարող ես յուսալ ինձ վրայ և ինչպէս ճիշտ է, որ դու բոլոր ատելութիւններից ամենագեղեցիկն ես, նոյնպէս ճիշտ է և այն, որ չուտով հպարտ արքայազուորը կզանայ ծաղրի առարկայ այն մարդկանց համար. որոնք նրան երկրպագում և աստուածացնում են։ Միայն ինձ այն ասա, ինչպէս է նրա անունը։

— Նրա անունն է Պսիխէա։

— Սակայն Էրոտը աւելի խիտրութիւն կանչը, եթէ այդպիսի խոստումներ չառ, մինչև որ չտեսնէր Պսիխէային, նա, տեսնելով վերջինիս, միանգամայն կուրացաւ նրա փայլուն գեղեցկութիւնից, ուստի բոլոր իւր խոստումները մոռացաւ. նա յաղթուեց սիրուց։

— Գաւաճան, մանչիկ,—գոռում էր Վեներան իւր որդու վրայ Ոլիմպիոսի գագաթից, պոկելով իւր ոսկեհուռ մազերը։ Նա յուսահատութեան մէջ էր։ Նրա ձայնին վրայ հասաւ Ապողոնը։

— Ո՞ Զևսի որդի, ինչքան անբաղդ եմ ես. գուցէ դու, որիվ առաջին անգամ նայերեցի իմ սէրը, վրէժ տանես իմ ախոյեանից. չկարծեմ, որ դու ապերախտ լինես. լիշում ես այն... հրաշալի գիշերները, որ անցկնը կացնում Ութսուն կղզում, ուր մեզ վրայ վարդեր էին թափւում վերևից. լիշում ես այն... Ու մինչ դու կրմոռանաս այն ուրախալի ժամերը. այժմ, առա խնդրեմ կարելի բան է, որ մի ինչ-որ մահկանացու կին ինձնից աւելի գեղեցիկ լինի։

Այս ասելով, Վեներան իւր փափուկ և քնքոյշ ձեռներով գրկեց Ապողոնի պարանոցը։ Ապողոնը սրբուց հալւում և գոսում էր։

— Լսիր Վեներա,—ասաց նա.—դու գիտես, որ ես երկրիս վրայ ունիմ չատ պատգամախօսներ (օրակուլ). ես նրանցից մէկին կը նշանչեմ, որ նա յանդգնում է այդպիսի պատիւներ ընդունել մահկանացուներից։ Ես յոյս դրել եմ քեզ վրայ, գնա և վրէժխնդիր եղիր իմ տեղ»։

* * *

Ու իսկապէս Պսիխէայի հայրը եկաւ պատգամախօսի մօտ իւրարդին։ Նա չատ անհանդիստ էր աղջկայ համար, որը հազարաւոր փեսացուների մերժել էր տալ իւր սիրտը։ Վերջապէս եկաւ մի հզօր թագաւոր էլի նրան ուզելու նըպատակով. Թագաւորի հետ բարեկամանալը չատ մեծ բաղաւորութիւն պիտի համարուէր, իսկ մերժելը բաւական երկիւղալի սակայ աղջիկը նրան ես մերժեց, բայց ոչ թէ հպարտու. թիւնից, այլ նրա համար, որ զգում էր, որ նա որի կինը պիտի դառնայ բոլորովին չի տպրում մարդկանց մէջ։ Ու հայրը գնաց պատգամախօսի մօտ իմանալու, թէ արդիօք աղջկայ նախապատուիրը չի խոչրիլ նրան։

— Թագաւոր, ասաց պատգամախօսը, քո աղջիկը ճիշտ է գթած, բայց ոչ բոլորովին. իրաւ է որ իրեն ուզողներից ոչ մէկին չի գնալու, բայց թող ուրիշ ամուսնութիւն էլ չսպասէր։ Այն ամուսինը, որին պիտի կին լինի քո աղջիկը, մի հրէշ է, «որ ծնունդ է առած Սաինքսի գաշտոնա ճահիճներից։ Երբ կամենում ես ազատ պահիլ քո աշխարհը և ժողովուրդը այդ հրէշի ձեռքից պէտք է քո աղջկայ սպանիս հարցնես և տանես այն սարի գագաթն ու թողնես այնտեղ։

Պսիխէայի հայրը չատ էր սիրում իւր ժողովուրդը աւելի չատ քան իւր զաւակներին, ուստի վճռեց հետևիլ պատգամախօսին։ Ինչպէսի լաց, կոծ, պատ արցունքներ էին թափւում ամբողջ երկրում, երբ Պսիխէային սեազգեստ հագցրած դուրս էին տանում քաղաքի դռներից և հայրը կամաց քայլերով վհատութեամբ հետևում էր այդ տխուր հանդիսին, որը գնում էր այն անիծեալ ոսրի գագաթը։ Վերջապէս հասան որոշուած տեղը և պղկան այնտեղ թողցին մենակ։ Ինչպիսի սրտաճմլիկ տեսարան էր նորկայանում այն բոպէն երբ հայրը տալիս էր իւր աղջկան իւր վերջին հրաժեշտը։ Միայն Պսիխէայի քոյրերն էին, որ արտաքուստ լաց էին լինում, իսկ ներքուստ մտածում էին՝ «Շատ լաւ եղաւ, հիմա Պսիխէան չլինելուց յետոյ փեսացուները մեր ձեռքը կը խնդրեն»։

Երբ ամենքը հեռացան, Պսիխէան դիտից իւր չուրջը և մրայն անգութներ, ժայռեր ու ձորեր տեսաւ. նա սրտատրոփ սպասում էր, թէ ահա հրէշը կրգայ և կուտէ իրեն, և նրան տիրից տարսափ. նրա ոտները թուլացան և նա փռուեց գետնի երեսին ուշաղնաց։

Սակայն ինչքան եղաւ նրա հիացմունքը. երբ ուշքի գալով. տեսաւ իրեն մի հոյակապ չինուածքի մէջ, որի պատերը մարմարիոնից էին չինուած, իսկ յատակը նախշած էր թանկագին քարերով։ Նա կարծում էր, թէ իւր տեսածը երազ է, բայց որպէս զի համոզուի, թէ պա երազ չէ, նա մի սե-

1903—№200

Նրանք, որոնք իրենց ունեն իբրև ծառայ-

Նրանք, որոնք իրենց ունեն իբրև ծառայ-

Նորագրվեցին 1-ից ցն-ը «Գող-Գալ-ին ընդհանուր ժողովը կանչում է բոլոր բաժնետերերին, որ գրասենյակում ներկայանան և ստանան իրենց բաժնետոմսերի դիմաց 2 ռ. 50 կ.:

ՀԱՅԿԱԿԱՆ

Ֆիքիով քաղաքում հիշատակում են, որ Ֆիքիով քաղաքում հիշատակում են, որ

— Ֆիքիով քաղաքում հիշատակում են, որ

Ֆիքիով քաղաքում հիշատակում են, որ

Ֆիքիով քաղաքում հիշատակում են, որ

ԳՈՒՆԱՅԻՆ

(Շարունակություն)

Ա.

Մորգենը ծիծաղեց և ասաց.

— Ես հույս ունեի, որ դուք ինձ կհարցնեք, թե ինչպես եմ ես ձեռք բերել այդ ամենը, և ես պատրաստ էի ձեզ ամեն ինչ պատմել, որովհետև ես ոչ մի բանից չեմ վախենում, և ոչ ոքից չեմ թաքցնում իմ գործերը։ Ես ամեն ինչ անում եմ բացահայտ, և ինձ համար ամենից լավ քաղաքականությունը ճշմարտությունն է։ Ես ամեն ինչ կարող եմ ասել ձեզ, և ես ձեզ կասեի, եթե ինձ հարցնեիք։ Բայց դուք ինձ չհարցրեցիք, և ես ստիպված եմ ինքս ինձ պատմել։ Ես ստիպված եմ ինքս ինձ պատմել, որովհետև ես ոչ ոքի չեմ վստահում, և ոչ ոքի չեմ ուզում վստահել։ Ես ինքս ինձ պատմելու եմ, որովհետև ես ուզում եմ, որ ինձ հետ ոչ ոք չխոսի այդ մասին։ Ես ուզում եմ, որ ինձ հետ ոչ ոք չխոսի այդ մասին, որովհետև ես ուզում եմ, որ ոչ ոք չիմանա, թե ես ինչպես եմ ձեռք բերել այդ ամենը։ Ես ուզում եմ, որ ոչ ոք չիմանա, թե ես ինչպես եմ ձեռք բերել այդ ամենը, որովհետև ես ուզում եմ, որ ոչ ոք չիմանա, թե ես ինչպես եմ ձեռք բերել այդ ամենը։

Մորգենը ծնվել է 1817 թվականին։ Նրա հայրը եղել է շատ հարուստ մարդ, և Մորգենը ստացել է շատ լավ դաստիարակություն։ Նա սովորել է Հայդելբերգի համալսարանում, որտեղ նա ուսանել է 17-ից 22 տարեկան հասակում։ Նա ուսանել է մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, աստղագիտություն, բնագիտություն, փիլիսոփայություն, պատմություն, գրականություն, լեզուներ, երաժշտություն, նկարչություն, քանդակագործություն, ճարտարապետություն, պարզ ասած՝ ամեն ինչ, որ կարելի է սովորել համալսարանում։ Նա ուսանել է նաև ռազմական գիտություններ, ձիավարություն, սուսերամարտ, հրացանաձգություն, լողալ, ցատկել, վազել, ըմբշամարտել, բռնցքամարտել, պարել, երգել, նվագել դաշնամուր, ջութակ, ֆլեյտա, կլարնետ, հոբոե, ֆագոտ, տրոմբոն, կոռնետ, տիմպան, թմբուկ, զանգեր, քսիլոֆոն, կաստանյետներ, եռանկյուն, մետաղյա ափսեներ, զանգակներ, հարվածային գործիքներ, ստեղնային գործիքներ, լարային գործիքներ, փողային գործիք

Անգլիական «Finans Nevs» լրագիրը հաղորդում է, որ գործերի դրութիւնը Հարաւային-Աֆրիկայում խիստ վրդովեցուցիչ է, և տարակոյս է, որ ամենամօտ ժամանակում այնտեղ նոր ապստամբութիւն ծագի։

—«Berlin. Tageb.»-ին Սան-Խուինդոյից հեռագրում են, որ քաղաքի հրամայանձգութիւնը դեռ ևս չարունակւում է։ Վերմանական «Պանտէր» և «Գաղէլ» պրահակիրները նաւահանգիստ են մտել։ Ամէն է գալիս հանուած բուսական բանակութեամբ զօրք, արտաոհմանեան հրետանաւորանները պահպանելու համար։

—Այս օրերս «Սահարայի կայար» ժակ Լէրոդին հրաւիրուել է պատասանական քննիչ Անգրէի կարինետը անգգուշութեամբ մահ պատճառած լինելու առիթով նրա վրա բարդուած մեղադրանքը քննելու համար։ Եւ որովհետև Լէրոդին բացակայ է եղել (նա գտնւում է Լոնդոնում), ուստի որոշում է կայացուել նրան բռնի բերելու մասին։ Լէրոդին պէտք է ձերբակալուի Լոնդոնում, քանի որ նրա վրայ եղած մեղադրանքը անգլո-ֆրանսիական պայմանագրի համաձայն՝ պարտաւորեցնում է յանձնել։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 9-ի (Ն. տ.) Վատիկանի կարդինալների ժողովում Պիոս X-ը իւր արտասանած ճառի մէջ, որ գուա կրօնական բնաւորութիւն էր կրում, յայտնել է, թէ կրօնն ու եկեղեցին հակառակ չեն գիտութեան ու յառաջադիմութեան։

—«Հուասի» գործակալութիւնը հաղորդում է, որ Մադրիդի կառավարական շրջաններում հաստատւում է սպանիական մի թերթի առած տեղեկութիւնը պետական յեղաշրջում առաջ բերելու նպատակով պատրաստուած, բայց անյաջող անցած փորձի մասին։

—«Morn. Post»-ի Պեկինի թղթակիցը հաղորդում է, որ ռուսական կառավարութիւնը ճապոնական դեսպանին յայտնել է, թէ Մանջուրիայի վերաբերեալ բանակցութիւնները ինչ այսուհետև առաջ պէտք է տանի միմիայն Չինաստանի հետ։

—Բուլղարիան, հաստատիք, չունենալով ռուս-ասատրիական վերջին յայտարդի յաջողութեան նկատմամբ, պատձեալ չարունակում է իւր պատերազմական պատրաստութիւնները։

«ՆՈՐ-ԴԱՐ»Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՎԻՆՆԱ. —Պառլամանտարների ժողովում Կեօրբերը խօսում էր առևտրական դաշնագրերի մասին և ասաց, որ Աւստրիան կաշխատէ կնքել նպատաւոր առևտրական-քաղաքական համաձայնութիւն Ռուսիայի հետ։ «Մենք ամէն մեկ յոյս ունինք մեր թագաւորութեան դէպի այդ պետութիւնն ունեցած բարեկամական կենդանի յարաբերութիւնների վրայ։ Կարծում եմ, որ աւստրիական ամեն մի կոնստրուկցիա հոգածու կերպով պէտք է ի նկատի ունենայ արտահանութեան հնարաւորութիւնը։ Մեր արդիւնաբերական ամենից աւելի զարգացած գաւառները չատ հետու չեն սահմանից և եթէ մեզ աջողուի բանակցութեամբ զարգացնել մեր թագաւորութեան հիւսիս-արևելքում, ապա մեր Ռուսիայի հետ ունեցած յարաբերութիւնների բերնաւորութիւնը կանխատեսուած է ուղիղ,—ասաց Կեօրբերը։

ԿՈՒՈՆ. — Պառլամանի ներկայացուցիչները մերժեցին նորից Կոլումբիայի հետ միանալու առաջարկը։ Կոլումբիայի ներկայացուցիչները վերադարձան Սանտիլլա։

ՎԻՆԶՈՐ. — Արքայական պալատում տեղի ունեցաւ ընտանեկան ճաշ։

ԿՈՏԵՈՒՆԶ. — Քաղաքային խորհուրդը նոյեմբերի 4-ին որոշեց միանալ Կաղան քաղաքի միջնորդութեանը Կաղանից Արանսկի վրայով մինչև Կոտելնիչ երկաթուղին անկկացնելու վերաբերմամբ, ընդունելով, որ այդ ճանապարհը համապատասխանում է Վոլգայի վրայ գտնուած բոլոր տեղերի, Պետերբուրգի նաւահանգստի և Վլատկայի երկրի չահերին, իսկ Նիժնի Նովգորոդ-Կոտելնիչի տեղական դիծը համապատասխանում է միայն Նիժնիի չահերին։

ՄՐՇՕԼ. —Քաղաքային խորհուրդը, լսելով Արեւմտեան Տաբրզինեին ալեան կանգնեցնելու վիկտորեան, որոշեց նախընտրել կրթական հաստատութիւնները, կառուցանելով ժողովրդական տուն և այլ բանի համար տեղ յատկացնել։

ՊԱՐԻԶ. —Մանրակենսաբան Մալմորեկը բժշկական ակադեմիայի նիստում հաղորդեց, որ իրեն աջողուել է մշակել հակատուբերկուլեօզի շիճուկ։

Կ. ՊՈԼԻՍ. —Համաձայնութիւն կայացած պետութիւնների դեսպանները նոյեմբերի 3ին Բերանն ուղարկած տագնապալի հեռագրութիւններ տրին այն տեսիլ, որ ռեֆորմներին վերաբերեալ առաջարկներին պատասխան չեն ստացել։

ՊՈՐՏ-ԱՐԹՈՒՐ. —Ճապոնական մամուլի մէջ պատերազմական տոնը, որը լուել էր, նորից բարձրացել է։ Թւում է, թէ ճապոնական գործակալները Չինաստանում մի քանի հետախոյզներ են աշխատեցրել։ «Nord China Daily News»-ի ասելով, Չինաստանի փոխարքաներին և նահանգապետներին հեռագրով հրահանգներ են ուղարկուած չտատիպել դրամ և զօրք հաւաքել, որովհետև իբր թէ կասկած է որ Ճապոնն պետական յարաբերութիւնները Ռուսիայի հետ մի քանի փոխարքաների պատրաստած է միջոցներ ձեռք առնել ճապոնական յարաբերութիւնների համար, որպէսզի չկրկնուեն նախկին տարիների սխալները։

Կ. ՊՈԼԻՍ. Համաձայնութիւն կայացած պետութիւնների տագնապները տպատրանք է նոյեմբերի 3-ին (?). պատրաստը մշակել է ներքին գործերի մինիստրը։

ԼՈՆԴՈՆ. —Մօտիկ ժամանակներում անգլիացիները կատարելու են դէպի Տիբէթ մի կարևոր արշաւանք, ծանրանալով առաջնորդութեամբ։ Պէտք է գրաւուի Շումբի գետի հովիտը, մինչդեռ Բուտանի մէջ տեղ, և պէտք է ձեռնարկուի մի արշաւանք դէպի Գեանցէ, որը գտնւում է մօտ 150 մղոն Լհասայից հեռու։ Այս քաղաքից տատցած վերջին տեղեկութիւնից տեսիլ, որ նրա համաձայն խնդրի լուծումը քիչ հաւանական է ներկայանում, ծանրաքարշը մօտիկ խորհրդակցել է փոխարքայի հետ։ Լհասայի կառավարութիւնը տագին քանակութեամբ հրացաններ է բաժանում և առաջարկում է բնակչութեան պատերազմի պատրաստուել։

Նոյեմբերի 6-ից

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. —«Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Փեոդորովնան նոյեմբերի 4-ին հիւանդացաւ աջ ականջի սուր բորբոքումից։ Նախորդ օրերում հիւանդութիւնը ուր տարական ընթացքից լատորում չէ ունեցել։ Տաքութեան տատիճանն է 37,6 զարկերակը 68», Տատրագրել են, պալատական բժիշկ Հիւշ. բժիշկ Կ. Բոննի, Սկերնեվից, 5 նոյեմբերի 1903 թ.։

ԴԱՐՄՇՏԱԴՏ. —Թագուհի Կայսրուհին, ականջի բորբոքում տատցած լինելով, Նորին Կայսերական Մեծութիւններդ ցաւում են, որ չկարդ է կարդանան Դարմշտադտ գնալ իշխանուհի Ալիսային թագմանը ներկայ գտնուելու։

ՎԱՇԻՆԳՏՈՆ, —Պահեստայի դեսպան Բունօ-Վարիլիան տատնձին դիկուցատրել պիտուն է տրել պետութիւնների այտտեղի ներկայացուցիչներին և իմնդրել, որ ակտութիւնները ճանաչեն հատարակապետութիւնը։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

տեղեկագիր 4 նոյեմբերի

Վաքսելիս կուրսը երեք ամսով.

Լոնդոնի վրայ	համար	93, 75
Բերլինի	» 100 մարկի	» 45,90
Պարիզի	» 100 ֆրանկի	» 37,32½

Վաքսելի կուրսը չէքերով

Լոնդոնի վրայ.	94,95
Բերլինի »	46,30
Պարիզի »	37,62½
Բորսային դրոկմտը	5—6½%
4% պետական ռնտը. . . .	99½ սա.
4% պետական փոխատութ. . .	—
4½% նեռքին փոխ. 1893 թ. .	—
4% գրաւթղթ. պետ. ռնտ.	
կալ. բանկի	95¼
5% նեռք. խոշ. փոխ. 1864 թ.	456 սա.
5% նեռք. խոշ. փոխ. 1866 թ.	346 սա.
5% խոշ. գր. պետ. ռնտ. կալ.բանկի	294½ սա.
5% օթլ» թ.ֆ. քոշ. վարկ. ընկ.	—
¼2% « » » »	
5% » թիֆլ. կալ. բանկի	—
6½% » » » » »	—
5% Քուրսկի կալ..	
6% » » » »	
6% » Բագուի » »	
Ակցիաներ Բագուի նաւթ. ընկ.	—
» Կասպիան »	5125
» Մանթաշեան և ընկ.	241½ սա
Փայեր հոր Նոբել »	10950 սա
Ակցիաներ » »	543

ԱՅՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՓԼԻՍԻ ԱՐՒՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ռուսական օպերա
Անոթեպրիզ Նորին Մեծութեան Սոլիտտ Ն. Ն. Փիգներին։
Ուրբաթ, Նոյեմբերի 7-ին, մասնակցութեամբ Նշանաւոր բարիտոն Ջիրալդոնիի կնոջ կայացուի

Բաղմատկարադ

օպերա 4. գործ. 6 պատկ. երաժ. Վերդիի։ Մասնակցում են. տ. տ. Գալգինա, Կաբատվինա, Կալիլինա, պ. պ. Ռայակին, Չիրալդոնի, Իւլիչենկո, Կլիւչներ, Փեդորով, Գրինև, Գաւրիլով։ Գլխ. ըժիշտ. Բոգոլիւբով.
կապելմեսատր Պոպոն.

Սկիզբը ժամը 8-ին երեկոյան.
Ազգ.—Ջաբաթ, Նոյեմբերի 8-ին, 6-րդ «Գալա» Ներկայացումը մասնակցութեամբ սոլիտտ Նորին Մեծութեան. Ն Ն. Փիգների. կընդերկայացուի «Բուրլովսկի» օպ. 4 գործ. երաժ. Նապրաւնիկի։ Կիրակի, Նոյեմբերի 9-ին, երկու Ներկայացում. ցերեկուայ Ներկայացումը. Լժանացած գնդերով «Ռուսալկա», օպերա 4 գործ. 7 պատկերով երաժ. Դարգոմիշսկու։ Երեկոյան մասնակցութեամբ սոլիտտ Ն Մեծութեան Ն. Ն. Փիգների և Նշանաւոր բարիտոն Ջիրալդոնիի կնեկայացուի։

1) «Սիբիլեան սափրիչ» օպ. 3 գործ. երաժ. Ռոսինիի, 2) Փինալ «Էլնանի» օպերայից. երաժ. Վերդիի. 3) պարկը «Շչելկունչիկ» Բալետից երաժ. Չայկովսկու կարէ պրիմա բալերին Assoluto Բիանկա Ջելատա, պ. պ. Վիգիա, Ագիլ և ամբողջ կորպիբալետը։
Տոմսակները վաճառւում են։
(252) 1—1

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, Նոյեմբերի 9-ին, առաւօտեան 10 ժամին ս. պատարագից յետոյ, Չամբուռեցոց ս. Աստուածածնի եկեղեցում լինելու է երկրորդ և վերջին ժողով Նոր-Երեզմոխ ընտրելու համար։ Ուստի սրանով խնդրում եմ նոյն եկեղեցւոյ պ. պ. Ծխականներին որոշած օրը և ժամին շնորհ բերել միշտալ եկեղեցին՝ ընտրութեանը մասնակցելու։

Թիֆլիսի հայոց եկեղեցիների բ. մասի գործակալ Գևոնդ քահ. Մանիկոնեանց։ (319) 2—1

Ջուտով տպագրութեան կայանձնուեն
I. Քահանայական խնդիրը
Բաժանորդագինն է 50 կոպ., յոյս տանելուց յետոյ մի թուղթի։
II. Թուղթիկ ակնարկ
Նայեա պատուի ուսիսյոս և Թրջեսյոս հայերի և հայից գաթձած Թուրքերի մասին»։ Բաժանորդագինը 25 կոպ., տպագրուելիք յետոյ 50 կոպ.
Դիմել Սիմֆորոպոլ՝ Ղ. քահ. Թովսէփեանին։
(313) 3—2

Լոյս է տեսել և ծախւում

„ԲԱՆԲԵՐ“

գրականութեան և արուեստի Ա. դիրքը։ Երկրորդը լոյս կ'տեսնի նոյեմբերի վերջերին։

Բաժանորդագինն է դուրս (4 ր.), արտատահման 12 ֆրանկ։ Առանձին համարներով ծախւում է 2 ր.50 կ.։

Բաժանորդագրութիւն ընդունւում է հս մաս մաս՝ գրուելիս 2 ր. 50 կ. մնացածը երկրորդ դրքի լոյս տեսնելիս.

Դիմել խմբագրութեանը՝ С. Петербургъ, Невск. пр. 55, և կամ հայ գրավաճառն երին։
(271) 0—5.

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԻՆ ՊԱՀՆԴՍ

Գ. Ի. ՊԱԼԻՋՅԵՆԻ

ԹՂԹԻ ԴՈՐԾԱՐԱՆԻ ԱԳՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ,

ՌԻԺԵԻԻ ԹՂԹԻ ԴՈՐԾԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ,

ԿՈՉԵԼԵԻԻ ԹՂԹԻ ԴՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱԳՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, Գալաբինսկիյ պրոսպ., տ. Մանթաշեանի,
Բագու, Օլգինսկայա փող., տ. քաղաքային վարչութեան։
պոսատի, գրելու, գրքերի, ալբոմների, տպագրական, լրագրական, մուղտչատուկի փաթաթելու թղթեր, ծառեններ, ծրարներ, գրելու և գրասենեական պարագաներ։ Տելեֆոն 67. (149) 24—23

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“

Գրախանութում ի միջի այլոց վաճառւում են հետևեալ թատրոնական գրքերը։

Պարոիել Սաւեզովեանցի — Ր. կ.

Դիշերվան սաքրը խէր է, կատակերգութիւն մէկ արար. երկ տպագր.	—30
Խաթարալա, կոմ. չորս արար.	—50
Օսկան Պետրովիչը էն կինոմը, կատակ. մէկ արար.	—30
Էլի մէկ գոհ, կոմեդ 5 արար. ր. տպ.	1—
Պէպօ, կոմեդիա երեք արար.	—50
Բանդած օջախ, կոմեդիա երեք արար.	—50
Ամուսիններ, կոմեդիա հինգ արար. ր. տպ.	1—

Նշմն Տէր-Գրիգորեանցի

Խէչօյի թուղը, ֆարս վոդեվիլ մէկ արար.	—50
Մօդա, կոմեդիա մէկ արար.	—50
Կուտայ պատճառը ես էի, կոմեդիա-վոդեվ. մէկ արար.	—50
Էլ չաբէս ինչ կամ երկու սիրահար, կատակերգութիւն մէկ արար	—50
Մէր կամ մահ. պիէս մէկ արար.	—50
Զրկանքի գոհ, դրամա չորս գործ, և վեց պատկերով	—80
Շարք, կատակերգ. մէկ արար. և Սարոափելի իրողութիւն (մէկ գրքում)	1—
Վայրենի, կատակերգութիւն մէկ արար.	—50
Բարեգործութեան դիմակի տակ, դրամա հինգ արար.	1—
Դոմոկլեան սուր, դրամա երեք արար.	—75
Ոճրագործի ընտանիքը և Հերկուլէս, (մէկ գրքում)	1—

Յովհաննէս-խան Պատկանեանի

Բիմէօ և Ջուլիէտ, Ճէկսպ, տղերք 5 արար	—60
Ինչպէս կուզէք թատերգ. հինգ արար.	—50
Վենետիկի վաճառականը,	—40
Սրքայ Լիր, տղերգութիւն հինգ արար.	—50
Համլէտ, Ճէքսպիրի, թարգ. Գ. Բարապետեան, (հեղինակի պատկերով)	1—
Տիգրանուհի, դրամա հինգ ա րար. Լ. Մանուէլեանի	—50
Դոկտոր Երուանդ Բօշաեան, Լ. Մանուէլեանի	—50
200.000, Փառնակէտի, կատակերգութիւն մէկ արար.	—30
Նիսիա, » » վոդվոլիլ մէկ արար.	—40
Ժան-Բօվրի, Վաքերի, թարգմ Ֆրանս, Փիլիբսի կոմ. դրամա 4 գործ	—50
Լիր Թագաւոր, Ճէքսպիրի տղերգ հինգ. արար. թարգմ Ս Մալխասեան	1—
Մարիաս, Խոզէ Էչհգարայի, դրամա 3 գործ. և վերջարանով, թարգմ. Պրասիլինկեանի	1—

Գէորգ Բարխուդարեանի

Փառատ, ողերգութիւն, Գէօթէի, հեղինակի պատկ. և կարևոր ծանօթութիւններով, թարգմ. գերման.	—2
Մարիա Սթիւարտ. ողբ. հինգ արար. Շիլլերի, թարգմ. գերմ.	—50
Վիլհելմ Տէլլ, դրամա հինգ գործ Շիլլերի, թարգմ. գերմ.	—1
Դոն Կարլոս, դրամատ. բանատեղծ. հինգ գործ. Շիլլերի, թարգմ. գերմ	—1
Օռլեանի գոյսը, վիպատական ողբ. հինգ գործ. Շիլլերի, թարգ. գերմ.	—60
Նաթան իմաստուն, դրամատ. բանատ. հինգ գործ. Լէսսինգի, թարգմ գերմ.	—60
Դօքտոր Թաֆաս, կատակերգ. վոդվիլ մէկ արար թարգմ. Ա. Սարդարեանի	—20
Օրթաճալու ըէֆը կամ Ջգու բան է, ֆարս վոդեվիլ մէկ արար. Ա. Սարդարեանի	—20
Պատիւ, կոմեդիա չորս գործ. Ֆ. Ջուլգերմանի, թարգմ. Ղարագեոզեանի	—50
Կեղծ ազնուականիք, Մոլիեռի, թարգմ. ֆրանս, Մ. Պէյլիճեանի	40
Կացինը բարին կպաւ, դրամատ. պատկեր 3 արար, և 6 պատկ. Հայկունու	1
Սաթլա, ողբ. 5 արար. թարգմ գերմ. պ. Ալիխանեան	20
Դիւցական տապաստութիւն, պատկեր Իտալիայի ժողովրդական կեանքից, գերմ. թարգմ. Լ. Բարայեան	15
Սանդուխտ Դշխոյի և Կուսի փրկութիւն, Ֆ. Պատկանեանի	60
Թագի համար, Ֆրանսուա Կոպպէի, ողբերգ 5 գործ. Ֆրանս. թարգմ. Մ. Մանուչարեան	50
Բարի իրիկուն, պ. Բանիալօն, թատերգ. կատապերգ. մէկ արար. թարգմ. Դարիպեան	50
Խոչընդոտ, Ալֆոնս Դօդէի, կատակ. 4 արար. թարգմանեց Մ, Նաւասարդեան	—50
Փառանձեմ կոմեդ. 4 արար. և 6 պատկ. Ֆըզրի	1
Սարաֆ, Սարպետ, ողբերգ. 5 արար.	30
Վիլհելմ Տէլլ, Լամարթինի, Թ. Հ. Առաքելեանի	15
Մեղապարտ հրէշներ, Դ. Քուշարեան դր. 4 գործ.	30
Փարիսեցիներ, դրամ. պատկ. 5 գործ	30
Ինչպէս տերևները, Դիպագրա, թարգմ հայր Քասպանիլեան.	60
Մանկական բեմ, Հա-վալլա, և կրթութիւնը խաթա չէ, (մէկ գրքի մէջ) Յ. Ղազարեանի	15
Դոկտոր Զտոկման կամ ժողովրդի թշնամին, դրամ. 5 գործ. թարգմ. Ս, Հախումեանի	—80
Տրիլբի, դրամա 4 արար թարգմ. Լևոն Մելիք-Ադամեանի	—24

Դասատուի գնողներին զիջումն կը լինի։ Վերոգիրը վճարով միայն նրանց կուղարկուեն, որոնցից կը ստացուեն կանխավճար։

Դիմել՝ Тифлисъ: Книжный магазинъ «Гуттенберг Г. И. Галустяну.
(317) 2—2.

Доз. Цензурою 5-го Октября 1903 г. Վերէիչն ԱԿամենմախեր Типографія Вериечевъ и Каменмахеръ Михайл. пр. Телеф.№852